

կանա» (52): Ծանօթ է՝ թէ ինչպէս Գողթան զուարթ երգիչներն իրենց բամբուռաց ու շրթանց վրայ կը նուագէին Սաթինկան տոփանքը (Խոր. 58): Աւելի ուշ՝ Ալաւկայ որդին հարսանեկան խնճոյից մէջ երգումները դեռ կ'որակէ՝ «հեթանոսական» կամ «ղիւական խաղը» բառերով (ԻԳ): «Դիւական երգը» են նոյն այդ «երգը զուսանացն» նաեւ ըստ Շնորհալոյն (Ընդհ. 42): Եւ յետին դարերէն ունինք «ուրախութեան տաղեր», որոց մէջ հին ախտալից քնարն է որ կը թրթռայ տակաւին, եւ որոց հետ կրնանք համեմատել Բիւզանդացւոց «զաղտեղութեան գեղօնս» (Ոսկ. Թղթ. Ա, 894), եւ Կեսարացւոց «երգը ամօթալիք» ըստածները (Բրս. Արբ.): — Գողթան երաժիշտները կը վիպէին նաեւ Հայոց վաղեմի թագաւորաց եւ զիւցազանց կեանքը. Արտաշիսի եւ որդւոց վարքը, Վահագնի ծնունդը, Սաթինկան առեւանգութիւնն ու հարսանիքը, Արտաւազդայ անէծքը, Վարդգեսի շինութիւնը (Խոր. 58, 59, 129, '39, '44): Համոզուած եմ՝ թէ ասոնք եւ այսպիսիք ալ կը մտնէին խրախութեան երգոց մէջ: — Հարսանեկան խնճոյից նուագերգութեանց նիւթերէն էր նաեւ փեսայի աշխարհին եւ ազգատոհմին ներքողը (Խոր. 307), որ